ԹԱՏՐՈՆ

# ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻՆ ՀԻԱՑՐԵՑԻՆ ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻ ՀԻԱՆԱԼԻ ԽԱՂԸ, ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՓԱՅԼՈՒՆ ՎՐԱՑԵՐԵՆԸ

*Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը վերադարձել է Ախալցիխե, Գորի եւ Թելավի քաղաքներում կայացած հյուրախաղերից, անմիջապես աշխատանքի անցել արդեն իսկ իր հարազատ շենքի պատերի ներսում, իսկ արդեն երեկ Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարարության կողմից, ի թիվս երկրի տասը թատրոնների, նվեր ստացել նորագույն միկրոավտոբուս: Ադամյանցիների այս ու սպասվող նորությունների մասին զրուցել ենք թատրոնի գեղարվեստական ղեկավար ԱՐՄԵՆ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆԻ հետ:*



*- Մեր թատրոնի երկարասպաս վերակառուցման ընթացքը ծառայեց երկու կարեւոր նպատակի,-* **խոստովանում է թատրոնի գեղարվեստական ղեկավարը:** *- Կունենանք հրաշալի նոր շենք եւ ունեցանք հնարավորություն խաղալ ոչ միայն Թբիլիսիի աշխարհահռչակ բեմերում, այլեւ ներկայանալ Վրաստանի գրեթե բոլոր քաղաքներում, որոնցից վերջինները այս փուլում Թելավին եւ Գորին էին:*

*Տասնամյակների պատմության մեջ մեր թատրոնն առաջին անգամ էր այս քաղաքներում, որի համար շնորհակալ ենք Վրաստանի մշակույթի նախարարությանը, քանի որ, շահելով հայտարարված նախագիծն ու ներկայացնելով երեք քաղաքներում մեր հյուրախաղային ծրագիրը, ունեցանք ավելի ճանաչելի դառնալու հրաշալի հնարավորություն: Նախարարությունը հովանավորել էր մեր ճանապարհածախսը, օրապահիկը՝ հյուրանոցը: «Երգում, ասմունքում, կատակում են ադամյանցիները» բեմադրությամբ ներկայացանք Ախալցիխեի մունիցիպալիտետի հայաբնակ գյուղերում: Այս ներկայացումը նպատակահարմար է հատկապես այն վայրերում, ուր չկան թատրոններ, ակումբներ:*

*Թելավիում եւ Գորիում ներկայացանք Նոդար Դումբաձեի «Մեղադրական եզրակացություն» ներկայացումով, մեր խաղացանկի դեռեւս միակ վրաց լեզվով բեմադրությամբ: Դահլիճներում անշլագ էր, օվացիաներն ու ծափահարությունները չէին դադարում... Ի դեպ, այս մասին վկայող տեսանյութերը տեղադրված են մեր թատրոնի ֆեյսբուքյան էջում: Նորանկախ Վրաստանի պատմության մեջ այս ներկայացումը վրաց հանդիսատեսի համար ադամյանցիներիս ճանաչելու առաջին հնարավորությունն էր, իսկ մեզ համար՝ գերհաճելի զգացումների առատություն:*

*- Հյուրախաղերից վերադարձը նշանավորվեց մեր հարազատ թատրոն, ինչպես ասում են, «աշխատանքային» մուտքով,-* **ընդգծեց Արմեն Բայանդուրյանը:** *- Թատրոնի շենքում քանի որ շարունակվում են ներքին հարդարման աշխատանքները, այդ պատճառով հանդիսատեսի առջեւ դռները բացել դեռ չենք կարող: Բայց փորձերն այսուհետ կընթանան մեր շենքում: Իսկ պատմական օրվա փորձերն արդեն սկսված են: Խոսքը թատրոնի բացման մասին է՝ գարնանը: Ներկայացնելու ենք Ալեքսանդր Ցագարելու «Խանուման», ապա Գաբրիել Սունդուկյանի «Պեպոն» ու... շատ ուրիշ հետաքրքիր պիեսներ:*

*Թատրոնում մեկ կարեւոր իրադարձություն եւս ունենք. այսուհետ ադամյանականի խաղացանկը կհարստանա վրաց անվանի ռեժիսոր, Թումանիշվիլու թատրոնի նախկին գեղարվեստական ղեկավար, Թբիլիսիի թատերական համալսարանի ռեկտոր Գիորգի Մարգվելաշվիլու տաղանդավոր ձեռագրի շնորհիվ, քանի որ նա այսուհետ մեր թատրոնի հաստիքով ռեժիսորն է լինելու:*

*- Եվ վերջապես, երեկվա թարմ ու ուրախալի լուրը,-* ***փաստում է գեղարվեստական ղեկավարը:*** *- Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարարությունը Թբիլիսիի 9 թատրոններին տրամադրել է նորագույն միկրոավտոբուսներ, որոնցից յուրաքանչյուրը կրում է թատրոնի համապատասխան լոգոն: Նախարար Թեա Ծուլուկիանին անձամբ մասնակցել ու շնորհավորել է՝ փոխանցելով այս արժեքավոր նվերները, որոնք յուրաքանչյուրիս օգնելու են առավել հաճախակի ու արդյունավետ դարձնել հյուրախաղերը: Եվս մեկ անգամ շնորհակալ ենք Վրաստանի մշակույթի նախարարությանը եւ անձամբ Թեա Ծուլուկիանիուն: Իսկ այժմ պատրաստվում ենք հյուրախաղերի Հայաստան. Էջմիածին, Արտաշատ, Աշտարակ եւ Հրազդան քաղաքներում ներկայանալու ենք Արմենուհի Սիսյանի «Ագռավն ասաց» ներկայացմամբ: Ի դեպ, նույն այս ներկայացումը դեկտեմբերին կմեկնի նաեւ Հնդկաստան:*

*- Մեզ համար Թբիլիսիի հայկական թատրոնի այս հյուրախաղը հաճելի անակնկալ է,-* **մեզ հետ զրույցում կիսվեց թելավցի թատերասեր, Թբիլիսիի համալսարանի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Թեւդորաձեն:** *- Իրոք, հիանալի թատերախումբ է, դերասաններն իրենց բարձր վարպետությամբ հիանալի մարմնավորեցին դումբաձեական կերպարներին: Եվ զարմանալի չէին բուռն ծափահարություններն ու օվացիաները, որոնք ուղեկցվում էին ներկայացման ողջ ընթացքում: Եվս մի հանգամանք. բուռն ծափահարություններով մենք արժանին հատուցեցինք ոչ միայն դերասանների վարպետությանը, այլեւ այն փայլուն վրացերենին, որով ցուցադրվեց ներկայացումը: Ուղղակի հիացած էինք հայ դերասանների վրացերենի իմացությունից: Շատ ուրախալի փաստ է, ինչը վկայում է, որ մեր հայ հայրենակիցները լիարժեք ներգրավվում են մեր ընդհանուր հայրենիքի կյանքի բոլոր ոլորտներին:*

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

ԹԱՏՐՈՆ

## «ԱԲՈՎՅԱՆԱԿԱՆ ՕՐԵՐ»՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Հոկտեմբերի 7-9-ը, «Լուսավորչի հետքերով» ծրագրի շրջանակում, Երեւանի Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանը, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի հետ համագործակցությամբ, իրականացրեց «Աբովյանական օրեր՝ Թբիլիսիում» եռօրյա միջոցառումների շարքը:*



Հոկտեմբերի 8-ին «Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում կայացավ Խաչատուր Աբովյանի կյանքն ու գործը ներկայացնող ցուցադրություն: Գրական, գեղարվեստական միջոցառմանը մասնակցում էին Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը, Տեր Զավեն վարդապետ Յազիչյանը, Տեր Կիրակոս քահանա Սիմոնյանը, դեսպանության մշակույթի հարցերի խորհրդական Աննա Սահակյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, կրթական, մշակութային, հասարակական գործիչներ, մանկավարժներ, ուսանողներ, դպրոցականներ:

Զեկույցներով հանդես եկան գրականագետ, Ե.Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի գիտական գծով փոխտնօրեն Գ. Գասպարյանը («Վերքի տպագրությունը»), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայ գրականության եւ գրականության տեսության ամբոնի վարիչ Ս.Մուրադյանը («Աբովյան-Թումանյան առնչությունները»), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա.Ավագյանը («Աբովյանի՝ Թիֆլիսյան տարիների գործունեությունը»), բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ Հայոց լեզվի ամբիոնի դասախոս Ն.Դիլբարյանը («Դորպատյան օրագրերը»), Խ.Աբովյանի տուն-թանգարանի տնօրեն Ս.Խոջամիրյան («Խ.Աբովյանի արձանի ոդիսականը»), Խ.Աբովյանի տուն-թանգարանի ավագ գիտաշխատող Ն.Դանիելյանը («Աբովյանը առաջին շարք»), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էմմա Ախտյանը: Ծրագրի համերգային հատվածում ելույթ ունեցան Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժիշտներ Մարգարիտ Սարգսյանը (դաշնակահար) եւ Անդրանիկ Մալխասյանը (մեներգիչ):

Ծրագրի մասնակիցներն այցելեցին Թբիլիսիի հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն, շրջեցին Հին Թիֆլիսի թաղամասերով, եղան Աբովյան փողոցում:

Խաչատուր Աբովյանի կյանքն ու գործունեությունը ներկայացնող ցուցադրությունը «Թումանյանի տանը» կգործի մինչեւ նոյեմբերի 3-ը:

***«Հովհ. Թումանյանի տուն» կենտրոնի տեղեկատվական ծառայություն***

## ԱՓԻՑ ԱՓ. ՀԱՆՈՒՆ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԽԱՂԱՂ ԿԱՊԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ

*Վրաստանի գրողների միության եւ Թբիլիսիի քաղաքապետարանի աջակցությամբ, վրաց-հայկական մշակութային կապերի ամրապնդման նպատակով իրականացավ «Դրկից իմ, հարեւան» նախագիծը: Անցկացվեց «Արձագանք ափից ափ» վրաց-հայկական խաղաղության միջոցառումը, որտեղ ներկայացվեցին թբիլիսցի բանաստեղծուհի Թամար Գաբրոշվիլու «Արձագանք» եւ երեւանցի բանաստեղծուհի Նինո Սպանդերաշվիլու «Ափից ափ» հայերեն ու վրացերեն գրքերը՝ ափից ափ սեր տարածելով:*



Վրաստանի գրողների ստեղծագործական տանը ջերմությամբ հյուրընկալվել էր Հայաստանի պատվիրակությանը, որի կազմում էին Հայաստանում գործող Մշակույթի հայկական հիմնադրամի նախագահ, բանաստեղծ, թարգմանիչ եւ գեղանկարիչ Արեւշատ Ավագյանը, գրող, «Սպիկա» հրատարակչության տնօրեն Արտակ Ավագյանը, Հայաստանում «Իվերիա» վրացական համայնքին կից գործող կիրակնօրյա դպրոցի տնօրեն Լիանա Սամադալաշվիլին, գրող, առակագիր, Հայաստանի ժողովրդական երգերի պետական համույթի մեներգիչ Արսեն Համբարյանը եւ երկու գործառույթի կրող, միաժամանակ հյուր ու հյուրընկալ եւ Հայաստանում «Իվերիա» վրացական համայնքի փոխնախագահ, երկու երկրների գրողների միությունների անդամ, թարգմանիչ Թամար Գաբրոշվիլու գրքի խմբագիր Նինո Սպանդերաշվիլին:

Գրական խաղաղ հարաբերությունների խորացմանն ուղղված ջանքերի համար հյուրերին շնորհվեցին պատվոգրեր, իսկ ստեղծագործական բեղմնավոր աշխատանքի համար Թամար Գաբրոշվիլին եւ Նինո Սպանդերաշվիլին արժանացան «Թամարիոնիի էնդալմա» («Հրովարտակ») մրցանակին:

Հյուրերին ողջունեց Գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին, ով խոսեց երկու երկրների՝ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ բարեկամության կամրջի կառուցման ու ամրապնդման, այս հանդիպման բարի նպատակի, երկու բանաստեղծների՝ Թամար Գաբրոշվիլու եւ Նինո Սպանդերաշվիլու ստեղծագործությունների մասին: Ելույթ ունեցան Վրաստանի արտաքին գործերի նախարարության աշխատակից, պրոֆեսոր, հայագետ Նինո Ափցիաուրին, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալի Ուրդուլաշվիլին, գրող եւ գեղանկարիչ Ժուժունա Վաշագաշվիլին, գրողներ, թարգմանիչներ Գելա Գելաշվիլին, Լելա Մետրեւելին, Թամար Գաբոձեն, Բաղաթեր Արաբուլին, Թամազ Խունաշվիլին, Քեթեւան Դոլիձեն եւ այլք: Միջոցառումը վարում էր «Մերանի» հրատարակչության տնօրեն Մանանա Գորգիշվիլին:

Երեկոն երաժշտական կատարումներով զարդարեցին Արսեն Համբարյանն ու Թամար Գաբրոշվիլու դուստրը եւ թոռնուհին՝ Բարբարե ու Աննա Ասանիձեները:

Երկրորդ օրը հյուրերին ընդունեց Թբիլիսիի «Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնը: Կենտրոնի տնօրեն Գիսանե Հովսեփյանին շնորհվեց Վրաստանի գրողների միության «Վրացական մշակույթի Ամագդարի» (Երախտավոր) կոչման վկայականը:

Միջոցառման մասնակիցները եղան Մցխեթայում, այցելեցին տեղի նշանավոր՝ Ջվարի («Խաչ») եւ Սվետիցխովելի («Սուրբսյուն») սրբավայրերը: Նրանք միասնաբար Աստծո օրհնությունը հայցեցին տեղի սուրբ աղոթատեղիներից:

...Սիրո արձագանքն ափից ափ դեռ երկար կուղեկցի խաղաղ տոնակատարության մասնակիցներին ու նրա ընդհանուր ուրախությունը կիսողներին:

*ՄԱՆԱՆԱ ԳՈՐԳԻՇՎԻԼԻ*

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ԱԼԵՐԳԻԱ՝ ՕՐԳԱՆԻԶՄԻ ԲԱՐՁՐ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ



***Հաճախ են խոսում ալերգիայի, ալերգիկ հիվանդությունների մասին: Նաեւ ասում են, որ ալերգիան կարող է ծագել տարբեր գործոններից: Ցանկալի կլիներ ավելի մանրամասն տեղեկանալ դրա մասին:***

***Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ***

***Նինոծմինդա***

Ալերգիան օրգանիզմի բարձր ու անսովոր զգայունությունն է միջավայրի որոշ գործոնների ազդեցության նկատմամբ: Դրանք կոչվում են ալերգեններ:

Ալերգիկ հիվանդությունները լայն տարածում ունեն աշխարհում եւ գնալով աճում են: Որոշ երկրներում բնակչության մինչեւ 10 տոկոսն ունի տարբեր ալերգիկ հիվանդություններ, որոնցից առավել տարածված են բրոնխյալ ասթման, եղնջատենդը, սեզոնային ալերգիկ ռինիտը (խոտային տենդ, պոլինոզ): Այս հիվանդությունների տարածման պատճառները հակաբիոտիկների եւ այլ դեղամիջոցների լայն կիրառությունն է: Քիմիական արդյունաբերության զարգացումը հանգեցրել է բազմապիսի արհեստական նյութերի ու միջոցների առաջացման (մաքրող միջոցներ, փոշիներ, ներկանյութեր եւ այլ կենցաղային նյութեր), որոնցից շատերը կարող են հանդես գալ որպես ալերգեն:

Մի շարք վարակիչ հիվանդություններ ուղեկցվում են ալերգիայով: Դրանք կոչվում են վարակիչ-ալերգիկ հիվանդություններ: Երբեմն դրանց զարգացմանը նպաստում են մաշկի վրա, շնչուղիներում, բերանի խոռոչում եւ աղիքներում գտնվող մանրէները: Ալերգիայի աղբյուր են նաեւ կարիեսը, քթի բորբոքումները, խոլեցիստիտները եւ այլ բորբոքումներ:

Գրեթե յուրաքանչյուր դեղամիջոց կարող է ալերգիա առաջացնել: Ասպիրինի գործածության շուրջ 2 տոկոսի դեպքերում ալերգիկ բարդացումներ են դրսեւորվում, պենիցիլինի դեպքում բարդացումների թիվը հասնում է 16 տոկոսի: Որեւէ դեղամիջոցի լայն կիրառությունը նույնպես նպաստում է ալերգիայի տարածմանը, քիչ գործածելու դեպքում ալերգիկ երեւույթները նվազում են: Ամենաալերգիկ դեղամիջոցը պենիցիլինն է, որի նույնիսկ չնչին քանակությունը կարող է օրգանիզմի ալերգիկ ռեակցիա առաջացնել:

Պետք է հիշել, որ ցանկացած դեղամիջոցի գործածումն առանց բժշկի նշանակման չափազանց վտանգավոր է:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

# ԳՈՒՅՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

***Այն, որ գույները ազդեցություն են գործում մարդու օրգանիզմի վրա, հայտնի փաստ է, չնայած լավ կլիներ իմանայինք, թե ո՞ր գույնն ի՞նչ ազդեցություն է գործում:***



***Ս.ԲԱՐՍԵՂՅԱՆ***

***Բոլնիսի***

Գույները մեր օրգանիզմի վրա ունեն որոշակի ազդեցություն:

Կարմիրը խթանում է նյարդային համակարգի աշխատանքը, լավացնում արյան շրջանառությունը, արտազատում ադրենալին, օգտակար է սակավարյունության եւ ցածր ճնշման դեպքում: Խորհուրդ չի տրվում բարձր ճնշման, արյունահոսության, բորբոքումների դեպքում:

Նարնջագույնը լիցքավորում է էներգիայով, խթանում, լավացնում է մարսողությունը, արյան շրջանառության աշխատանքը, օգտակար է ջղաձգումների (սպազմ) դեպքում: Հակացուցումներ գրեթե չունի:

Դեղինը դրական ազդեցություն է գործում նյարդային եւ մարսողական համակարգերի վրա, օգնում է կենտրոնանալ, խթանում է ուղեղի աշխատանքը, լավացնում հիշողությունը: Խորհուրդ չի տրվում անքնության եւ ստամոքսային ծանր հիվանդությունների դեպքում:

Կանաչը հանգստացնում է, թուլացնում, օգտակար է նյարդային համակարգի հիվանդությունների դեպքում, լավացնում է տեսողությունը, նվազեցնում արյան ճնշումը, բարերար ազդեցություն է գործում սրտանոթային համակարգի վրա:

Երկնագույնը հանգստացնում է, իջեցնում արյան ճնշումը, օգնում անքնությանը, ունի հականեխիչ հատկություն: Խորհուրդ չի տրվում ցածր ճնշման դեպքում:

Կապույտը դրական է ազդում նյարդային համակարգի վրա, ունի հակաբորբոքային հատկություն, օգնում է արյունահոսության եւ ռեւմատիզմի դեպքում: Խորհուրդ չի տրվում ընկճախտի, փիատության դեպքում: Կապույտը մեծ ազդեցություն ունի գեղձերի վրա, ուստի, խորհուրդ է տրվում գործածել զգուշությամբ:

Մանուշակագույնը դրական է ազդում հոգեկանի վրա, իջեցնում արյան ճնշումը, կարգավորում է սիրտն ու թոքերը, խթանում ստեղծագործական միտքը: Խորհուրդ չի տրվում ալկոհոլիզմի, ծանր հոգեկան հիվանդությունների դեպքում:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

# ԻՆՉՊԵ՞Ս ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ԵՐԵԽԱՅԻՆ ԱՌԱՆՑ ՊԱՏԺԵԼՈՒ

*Երեխաների դաստիարակության թեման երբեք չի կորցրել իր հրատապությունը, առավելեւս ներկայիս տեղեկատվական լայն հնարավորությունների պայմաններում, երբ երեխաները, կամա թե ակամա, ստանում են բազմապիսի տեղեկատվություն կյանքի, վարվելաձեւի, վարքի եւ այլնի մասին:*

*Ինչպե՞ս դաստիարակել երեխային, ի՞նչ մոտեցում ցուցաբերել՝ բացատրությո՞ւնը, թե՞ պատիժը: Ստորեւ ներկայացվող նյութը որոշակի հստակություն է մտցնում այդ հարցում:*



Ըստ հոգեբանների, երեխայի պատիժն իր արարքների համար պատասխանատու լինելու վրա որեւէ կերպ չի ազդում: Երբ երեխային պատժում եք, նա դառնում է կա'մ չափազանց զիջող, կա'մ չափազանց համառ, երբեմն էլ՝ պարզապես քինախնդիր:

Նա կենտրոնանում է իրեն պատժողների հետ հաշիվներ մաքրելու վրա եւ իր վարքի հետագա հետեւանքների մասին չի մտածում, ոչ էլ դաս է քաղում պատժից:

Հոգեբան, երեխաների եւ ծնողների միջազգային ցանցի ղեկավար (INCAF) Քեթրին Քվոլսը խորհուրդ է տալիս այն դեպքերում, երբ երեխայի վարքը ձեզ բարկացնում է, ոչինչ չասել ու չանել, պարզապես զգացնել պետք է տալ երեխային, որ նրան սիրում եք:

Կարեւոր է հաշվել, թե օրվա ընթացքում քանի անգամ եք գովում երեխային եւ քանի անգամ բարկանում նրա վրա: Եթե ավելի շատ բարկանում եք, քան գովում, ապա շտապ հարկավոր է փոխել դաստիարակության մեթոդները:

Հարկավոր է վերլուծել առավել հաճախ հանդիպող կոնֆլիկտային իրավիճակները, մշակել դրանց զարգացման մի քանի սցենարներ եւ համապատասխան կառուցողական որոշումներ:

Ինչպես բացատրել առանց պատժելու.

* Խիստ պահանջեք, որ երեխան դադարեցնի այն գործողությունը, որը ձեզ դուր չի գալիս: Հստակ ասեք, որ ձեր ընտանիքում այդպես վարվել չի կարելի:

* Պետք չէ հարցնել՝ «Ինչո՞ւ այդպես վարվեցիր», անիմաստ է: Ավելի լավ է, օրինակ՝ պահանջել, որ երեխան հատակը մաքրի, եթե հատուկ ինչ-որ բան է թափել: Կարեւոր է, որ իր թափածը եւ վատ պահվածքի հետեւանքները երեխան ինքը վերացնի:

* Երեխային պետք է հանգիստ բացատրել, թե ինչի համար եք նրան պատժում՝ առանց գոռալու ու վախեցնելու:

* Բացատրեք, որ զգում եք, թե երբ նա չի լսում ձեզ: Ասեք, որ դուք տխրում եք դրանից:

* Պետք չէ ապագայում սպասվելիք պատժից խոսել:

* Որպես պատիժ՝ երեխային կարող եք որոշ ժամանակով զրկել քաղցրավենիքից, խաղերից, հեռուստացույցից, համակարգչից, հյուր գնալուց, ժամանցի այլ միջոցներից, կամ մերժել երեխայի՝ նվեր գնելու խնդրանքը:

* Կարող եք նաեւ երեխային խնդրել, որ նա որոշ ժամանակ սենյակում մենակ նստի ու մտածի իր վարքի մասին, սակայն երեխային մենակ թողնել կարելի է երեխայի տարիքին համապատասխան րոպեներ, օրինակ՝ երեք տարեկանին երեք րոպե:

Ուշադրություն դարձրեք, որ սենյակում մենակ նստելը նույնը չէ, ինչ երեխային լոգարանում փակելը:



## ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱԶԱՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Բնությունը ցանկանում է, որ երեխաները լինեն երեխա, քանի դեռ չեն դարձել մեծահասակ»:

***Ըստ հայտնի մանկավարժ Ժան Ժակ Ռուսսոյի, երեխան պետք է դաստիարակվի բնական, ազատ եւ բնության հետ համապատասխան: Իսկ դա, ըստ Ռուսսոյի, նշանակում է, որ դաստիարակության ընթացքում պետք է հետեւել երեխայի բնույթին եւ հաշվի առնել նրա տարիքային առանձնահատկությունները:***

***«Բնությունը ցանկանում է, որ երեխաները լինեն երեխա, քանի դեռ չեն դարձել մեծահասակ»,- գրում է Ռուսսոն: Նա կարծում էր, որ դաստիարակությունը ստանում են երեք հիմնական աղբյուրից՝ բնությունից, շրջապատող մարդկանցից եւ առարկաներից:***

**** Բնությամբ դաստիարակել՝ Ռուսսոյի կարծիքով, դա իրականացվում է մարդու հնարավորությունների, կարողությունների ներքին զարգացման ճանապարհով, զգայական համակարգի զարգացմամբ:***

**** Մարդկանց միջամտությամբ դաստիարակություն՝ դա մարդուն սովորեցնում է զարգացնել եւ կիրառել իր ունեցած այդ նույն հնարավորություններն ու կարողությունները:***

**** Առարկաներից դաստիարակվել՝ դա սեփական փորձն է , որը մարդ ձեռք է բերում՝ իրեն շրջապատող առարկաների հետ հաճախակի շփվելիս:***

***Դաստիարակությունը կլինի ճիշտ, եթե վերը նշված երեք գործոններն իրագործվեն իրար հետ համաձայնեցված:***

## Ա Ն Ե Կ Դ Ո Տ Ն Ե Ր

*☺ - Հայրիկ, ոչխարները ամուսնանո՞ւմ են:*

*- Եթե ուզում ես իմանալ՝ հենց միայն նրանք են ամուսնանում...*

*☺ - Ինչպե՞ս է ձեր ամուսինը: Առաջվա նման լուսնոտությա՞մբ է տառապում:*

*- Չէ', փառք Աստծո, ամեն ինչ վերջացավ:*

*- Բուժվե՞ց:*

*- Չէ', զբոսանքներից մեկի ժամանակ վերջապես ընկավ տանիքից:*

*☺ - Այս ի՞նչ եմ տեսնում: Կոնյա՞կ եք խմում: Բայց չէ՞ որ դուք սթափության ընկերության նախագահն եք:*

*- Հա', բայց հիմա արձակուրդում եմ:*

*☺ Ոստիկանը դիմում է ամրագոտին չամրացրած վարորդին.*

*- Ինչո՞ւ եք վարում առանց ամրագոտու:*

*Վարորդը.*

*- Կարելի է կարծել, թե դուք ուրախ չեք դրա համար...*

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Ուսուցիչ էի կոչվում, իսկ այժմ խենթ եմ անվանվում հասարակ վարքիս համար:

***ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ***
***(1102--1173)***
***Հայ բանաստեղծ***

Ճի՞շտ է, արդյոք, որ մարդն ապրի եւ ոչինչ չանի աշխարհի համար:

***ՆԻԿՈԼՈԶ ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ***
***(1817-1845)***
***Վրաց բանաստեղծ***

Դաժանորեն կյանք նետվելով՝ պտուղը ստիպված է մոռանալ բավարարման ամենասիրած միջոցները եւ հարմարվել նորերին: Այդ դաժան խաղը կրկնվում է զարգացման յուրաքանչյուր նոր փուլ անցնելիս:

***ՖԱՐԿԱՇ ՖԵՐԵՆՑ***
***(1905-2000)***
***Հունգարացի կոմպոզիտոր***

Օգուտը ոչ թե շատ, այլ լավ գրքերի մեջ է:



***ՍԵՆԵԿԱ***
***(մ.թ.ա. 4-65)***
***Հռոմեացի փիլիսոփա***

Բոլոր մարդիկ երջանկություն են բերում.՝ ոմանք՝ իրենց ներկայությամբ, իսկ ոմանք էլ՝ բացակայությամբ:

***Գրիգոր Յայլոյան***
***«Վրաստանի» ընթերցող***
***ԱՄՆ, Կալիֆոռնիա***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՅԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

*Հոկտեմբերի 14-ին Ղազախստանում աշխատանքային այցով գտնվող Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Աստանայի Կոնգրես կենտրոնում մասնակցեց Անկախ Պետությունների Համագործակցության անդամ երկրների ղեկավարների գագաթաժողովին:*




Գագաթաժողովի մեկնարկին ԱՊՀ անդամ երկրների ղեկավարները նախ հանդիպեցին նեղ կազմով, ապա նրանց միացան պատվիրակությունների ներկայացուցիչները:

Նիստի օրակարգում են հումանիտար համագործակցության, անվտանգության ապահովման եւ այլ հարցեր:

Գագաթաժողովի շրջանակներում կայացած հանդիպմանը Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին հրավիրեց Ռուսաստան՝ եռակողմ հանդիպում անցկացնելու նպատակով:

## ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆՆԵՐԻ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԸ՝ 25 ՕՐ, 3 ԱՄՍՎԱ ՓՈԽԱՐԵՆ

*Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հայտարարեց, որ հրաժարվում են պահեստազորայինների եռամսյա վարժական հավաքներից, փոխարենը դրանք կտեւեն 25 օր:*

- Մեր նպատակը հետեւյալն է՝ մենք հրաժարվում ենք եռամսյա հավաքներից, դրանք կդառնան 25-օրյա: 21 օրը հիմնական ծառայությունն է, որից 7 օրը քաղաքացին անցնում է պատրաստություն, 14 օր անցկացնում է մարտական հերթապահություն: Շուտով կարգը կհաստատվի, եւ մենք դրա մասին կհայտարարենք: Առաջիկա հավաքները լինելու են 25-օրյա, այլեւս հրաժարվելու ենք եռամսյա հավաքներից, բայց սա լինելու է պարտադիր Հայաստանի Հանրապետության բոլոր զինապարտ քաղաքացիների համար: Խնդրում եմ՝ մեծ ուշադրություն իրավապահ մարմիններից, որովհետեւ շատ են խոսակցությունները, որ մշտապես շեշտը դրվում է միայն այն մարդկանց վրա, ովքեր միշտ պատրաստակամ են, բայց սա պետք է լինի պարտադիր բոլորի համար,- ընդգծեց Պապիկյանը:

Պաշտպանության նախարարը շեշտեց, որ զինապարտներին հնարավորություն է ընձեռվելու ընտրել հավաքին մասնակցելու ժամկետը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՐՏԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ

*Հոկտեմբերի 11-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ արտախորհրդարանական քաղաքական ուժերի հետ համագործակցության խորհրդակցական ժողովի մասնակից կուսակցությունների ղեկավարների հետ:*



Հանդիպմանը մասնակցել են «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը, Հայաստանի Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցության նախագահ Լեւոն Շիրինյանը, «Միասնական հայրենիք» կուսակցության նախագահ Միհր Տերտերյանը, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցության՝ Հայաստանի վարչության ատենապետ Սեդրակ Աճեմյանը, Հայաստանի եվրոպական կուսակցության նախագահ Տիգրան Խզմալյանը, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության ղեկավար Դավիթ Սանասարյանը, «Ուժը հայրենյաց» կուսակցության նախագահ Տիգրան Արզաքանցյանը:

## ՏԱՍՆՕՐՅԱ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Հայաստանում հոկտեմբերի 13-ից մեկնարկել է 10-օրյա մարդահամարը: Սա Հայաստանի անկախության պատմության մեջ երրորդ մարդահամարն է:*

Սրանից առաջ Հայաստանում մարդահամար է անցկացվել 2001 եւ 2011 թվականներին:

Այս տարի առաջին անգամ մարդահամարի համար օգտագործվելու է համակցված մեթոդը: Հիմնական կարեւոր չոր թվերը ստացվելու են վարչական ռեգիստրից՝ ազգություն, քաղաքացիություն, տարիք, հետո հարցեր են ուղղվելու նաեւ քաղաքացիներին: Կատարվելու է ընտրանքային հարցում՝ 25 տոկոսի չափով: Այսինքն, հաշվարարն այցելելու է յուրաքանչյուր բնակավայրի յուրաքանչյուր 4-րդ տնային տնտեսություն, պլանշետի միջոցով լրացնելու է էլեկտրոնային հարցաթերթ: Առաջին անգամ է, որ այն անցկացվում է էլեկտրոնային եղանակով: Հարցերն ուղղված են լինելու տվյալ պահին տվյալ հասցեում բնակվող չափահաս անձին:

Կհավաքագրվեն տվյալներ նաեւ մարդկանց կրթության, առողջության, աշխատանքի, բնակպայմանների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, ներառված է լինելու 39 հիմնական հարց եւ տնային տնտեսության բնակպայմանների վերաբերյալ եւս 5 հարց:

Մարդահամարի արդյունքները պատրաստ կլինեն 1 տարուց:

### ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԾԱՌԱՑԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ

***Հոկտեմբերի 10-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Անվտանգության խորհրդի նիստ, որին, բացի Անվտանգության խորհրդի անդամներից, մասնակցել են նաեւ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանն ու Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը: Նիստում քննարկվեցին Հայաստանի առջեւ ծառացած մարտահրավերներն ու դրանց հաղթահարմանն ուղղված հետագա քայլերը:***

### ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ



***Հոկտեմբերի 10-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունեց Ամերիկայի հայկական համագումարի Հոգաբարձուների խորհրդի համանախագահներ Վան Գրիգորյանին եւ Էնթոնի Բարսամյանին, Համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունիին: Հանդիպմանը Հայաստանի վարչապետը բարձր գնահատեց Ամերիկայի Հայկական Համագումարի գործունեությունն ու ծրագրերը՝ ի շահ Հայաստանի եւ հայ ժողովրդի: Նիկոլ Փաշինյանը կարեւորեց Հայաստանի կառավարության եւ Սփյուռքի հայկական կազմակերպությունների միջեւ շարունակական երկխոսությունն ու համահայկական օրակարգի շուրջ համախմբումը: Հանդիպմանը քննարկվել են տարածաշրջանային իրավիճակին, Հայաստանի առջեւ ծառացած մարտահրավերներին, Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին եւ համազգային թեմաներին վերաբերող հարցեր:***

### ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

***Հոկտեմբերի 14-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Եվրամիության արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հետ: Զրուցակիցները քննարկեցին Պրահայում ձեռքբերված պայմանավորվածության համաձայն իրականացվելիք ԵՄ քաղաքացիական առաքելության լիազորություններին, գործունեությանը եւ տեղակայմանը վերաբերող հարցեր:***

## ԶԱՐԵՀ ՍԻՆԱՆՅԱՆ. «ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ԱՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐՆ ԱՎԵԼԻ ԱՄՈՒՐ ՀԻՄՔԵՐԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

*Ինչպես հայտարարեց Սփյուռքի գործերով գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը, Սփյուռքի հանձնակատարի գրասենյակը վերջին տարիներին աշխատել է բավականին բարդ պայմաններում, որովհետեւ կորոնավիրուսի համավարակի բռնկումից հետո, ունեցել ենք դաժան պատերազմ, որոնք ուղղակիորեն են ազդել Հայաստան-Սփյուռք հարաբերությունների վրա, բայց, այնուամենայնիվ, այդ պայմաններում գրասենյակն արել է առավելագույնը, որպեսզի Հայաստան-Սփյուռք հարաբերությունները դնի ավելի հիմնավոր եւ համակարգված հիմքերի վրա: Կարեւոր է այս բարդ իրավիճակում հարաբերությունների հաստատումը ոչ թե դոնորի ու բարեգործի սկզբունքների վրա, այլ երկուստեք ձեւավորվող երկխոսության, երկու կողմերի համար շահութաբեր, հասկանալի եւ փոխըմբռնման հիմքերի վրա:*




- Այս ամենի հետ մեկտեղ, գրասենյակը մեծ աշխատանքներ է տարել ենթակառուցվածքներ ստեղծելու վրա, որը շարունակական աշխատանք է: Քանի որ, երբ հարցը գալիս է Հայաստան-Սփյուռք ինտեգրման եւ հայրենադարձության կազմակերպման հարցերին, ապա առանց դրանց նպաստող ենթակառուցվածքներ ունենալու, լուրջ ու հիմնավոր քաղաքականություն չի կարելի վարել,- ասաց Զարեհ Սինանյանն ու հավելեց, որ իր նշած երկխոսության մի փուլը Համաշխարհային հայկական գագաթաժողովն է (Global Armenian Summit), որը կանցկացվի Երեւանում հոկտեմբերի 28-31-ը: Այն կազմակերպվում է ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից: Նախատեսվում է հյուրընկալել շուրջ 600 մասնակիցի:

Գագաթաժողովի ընթացքում հնչեցված առաջարկները, լուծումներն ու արդյունքները կդառնան համահայկական օրակարգի ստեղծման եւ առաջմղման հիմնաքարերը: Այսպիսով, Հայրենիքն ու Սփյուռքը միասին կնախանշեն հետագա համատեղ աշխատանքի առաջնահերթություններն ու ճանապարհները:

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը նշեց, որ գրասենյակն ունի նաեւ կրկնվող ծրագրեր, որոնք ամեն տարի անցկացվում են: Դրանցից մեկը, որը նոր է ավարտվել, սփյուռքահայ պատանիների ուսումնաճանաչողական «Քայլ դեպի տուն» ծրագիրն է, որին դիմել է 2600 սփյուռքահայ: Նրանցից 1200-ը հնարավորություն են ունեցել ամառն անցկացնել հայրենիքում, 200-ն առցանց են մասնակցել ծրագրին:

Ընթացքի մեջ են «Սփյուռքի երիտասարդ դեսպան» նախագիծը, «ի Գործ» նախագիծը, «Սփյուռքի ներուժի քարտեզագրում» ծրագիրը, որի շրջանակներում արդեն իսկ հավաքագրվել է 50 հազարից ավելի տվյալ:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

*ՀՈԿՏԵՄԲԵՐ. 17-10-2022 Ղունկիանոս Հայրյուրապետի, որ հավատաց Քրիստոսի խաչելությանն ու Հովսեփ Աստվածահորը, Հովսեփ Արիմաթացու եւ Քրիստոսի բարեկամ Ղազարոսի ու նրա երկու քույրերի՝ Մարթայի եւ Մարիամի հիշատակության օր*

## ՖՈՒՏԲՈԼ

# ԱՆՑԿԱՑՎԵՑ «ԵՎՐՈ 2024»-Ի ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 9-ին Գերմանական Ֆրանկֆուրտ քաղաքում կայացավ «Եվրո 2024»-ի որակավորման փուլի վիճակահանությունը:

**A խումբ.** Իսպանիա, Շոտլանդիա, Նորվեգիա, **Վրաստան,** Կիպրոս:

**B խումբ.** Նիդերլանդներ, Ֆրանսիա, Իռլանդիա, Հունաստան, Ջիբրալթար:

**C խումբ.** Իտալիա, Անգլիա, Ուկրաինա, Հյուսիսային Մակեդոնիա, Մալթա:

**D խումբ**. Խորվաթիա, Ուելս, **Հայաստան,** Թուրքիա, Լատվիա:

**E խումբ**. Լեհաստան, Չեխիա, Ալբանիա, Ֆարերյան կղզիներ, Մոլդովա:

**F խումբ**. Բելգիա, Ավստրիա, Շվեդիա, Ադրբեջան, Էստոնիա:

**G խումբ**. Հունգարիա, Սերբիա, Չեռնոգորիա, Բուլղարիա, Լիտվա:

**H խումբ**. Դանիա, Ֆինլանդիա, Սլովենիա, Ղազախստան, Հյուսիսային Իռլանդիա, Սան Մարինո:

**I խումբ.** Շվեյցարիա, Իսրայել, Ռումինիա, Կոսովո, Բելառուս, Անդորրա:

**J խումբ.** Պորտուգալիա, Բոսնիա եւ Հերցեգովինա, Իսլանդիա, Լյուքսեմբուրգ, Սլովակիա, Լիխտենշտեյն:

Խմբերում առաջին եւ երկրորդ հորիզոնականները զբաղեցրած թիմերը կնվաճեն «Եվրո 2024»-ի ուղեգիր: Մնացած երեք ուղեգրերը կխաղարկվեն Ազգերի լիգայի 2022 թվականի խաղարկության արդյունքում ձեւավորված փլեյ-օֆֆ փուլում:

Որակավորման փուլի հանդիպումները կանցկացվեն 2023 թվականի մարտ-նոյեմբերին: Եվրոպայի առաջնությունը կկայանա 2024 թվականի հունիսի 14-ից հուլիսի 14-ը:

## ԹԵԺ ԳԻԾ

# ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

*Շտապ բժշկական օգնություն* - **112**
*Պարեկային ոստիկանություն* - **112**
*Հրշեջ-փրկարար ծառայություն* - **112**
*Պահակային ոստիկանություն* - **125**
*Գլխավոր տեսչություն* - **126**
*Տեղեկատու բյուրո* - **118 08**
*Քաղաքապետարանի թեժ գիծ* - **272-22-22**
*Առողջապահության նախարարության թեժ գիծ* - **15-05**
*Ժողովրդական պաշտպան* - **299-58-98, 292-24-79**
*Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն* - **14-81**
*«Թբիլիսի էներջի»-ի տեղեկատվական ծառայություն* - **114, 240-40-04**
*«Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն* - **227-50-40**
*ԹԵԼՄԻԿՈ-ի թեժ գիծ* - **16 700, (+995 32) 5 000 777**
*Ջրամատակարարման թեժ գիծ* - **293-11-11**
*Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ* - **(593) 50-42-52**
*Օդանավակայանի տեղեկատվական բյուրո* - **231-03-41, 231-04-21**
*Երկաթուղային կայարան* - **1331, 2199010**
*Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան* - **(599) 74-73-73**

# ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆՈՒ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ, ԹԲԻԼԻՍԻԻ «ՎԱՆՔԻ ԴՊՐՈՑ» ԿՈՉՎՈՂ ԿՐԹՕՋԱԽԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՆՈՐ ՄԱՆՐԱԶՆԻՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ

*Պատմական հայտնի աղբյուրների համաձայն, Թբիլիսիի ներկայիս թիվ 104 դպրոցի տարածքում (նախկին՝ Գարեթուբանի, այժմ՝ Աքոնելի փողոց, Քուռ գետի աջափնյակ) 1430-1938 թթ. գործել է Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի Սուրբ Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցին, որը կոչվել է նաեւ «Վանքի Մայր Տաճար» կամ «Հարանց վանք»: Եռագմբեթ վանական հսկայական համալիրն իր մեջ ներառել է վանահոր երկհարկանի շենքը, կրթական ու մշակութային կենտրոններ, բնակելի սենյակներ: Բակում հուղարկավորվել են նաեւ ժամանակի մեծերը:*

*Խորհրդային շրջանում իրականացվող «կարմիր տեռորի» տարիներին, 30-ական թվականների Թբիլիսիում, ի թիվս մյուս՝ վրացական, հայկական, կաթոլիկե եկեղեցիների, ոչնչացվել է նաեւ այս Վանքի համալիրը: Այսօր վանական համալիրի տարածքում պահպանվել է զանգակատան եւ երկհարկանի առաջնորդարանի մի մասը, որը բնակելի շենքի մի հատվածն է կազմում: Վանքի տեղում կառուցված են թիվ 104 դպրոցը, Վրաստանի մշակույթի նախարարության շենքը:*



Վերջերս, նախարարության շենքում ու բակում, որոնք հարակից են դպրոցին, տարվում են վերանորոգչական աշխատանքներ: Հողային աշխատանքերի ընթացքում, բանվորները հայտնաբերեցին բազալտե, առանց գրությունների, ինչպես նաեւ հայերեն ու վրացերեն գրություններով մարմարե տապանաքարեր, մարդկային մասունքներ: Այդ մասին անմիջապես տեղեկացվեց Վրաստանի մշակույթի նախարար Թեա Ծուլուկիանուն: Հետամուտ լինելով կատարվածին՝ նախարարն իր մոտ հրավիրեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանին եւ «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանին: Հանդիպմանը որոշում կայացվեց մասունքները վերաթաղել Խոջիվանքի պանթեոնում: Թեա Ծուլուկիանու նախաձեռնությամբ ու կարգադրությամբ, արդեն հաջորդ տարվա հունվարից տվյալ վայրից 20-50 մետր հեռավորության վրա գտնվող տարածքում կիրականացվեն նոր մանրազնին պեղումներ:

Թբիլիսիում գործող «Միասին» հասարակական կազմակերպության նախագահ Լեւոն Չիդիլյանը «Վրաստանի» հետ զրույցում ասաց.

- Մենք շնորհակալ ենք նախարար Թեա Ծուլուկիանուն սրտացավության եւ աշխատանքները շարունակելու կարգադրության համար: Կարծում եմ, այս տարածքում դեռ շատ մասունքներ ու տապանաքարեր կգտնվեն,- ասաց Լեւոն Չիդիլյանը:- Մինչեւ այս պահը հայտնաբերվել է 2 դամբարան, որտեղ ոսկորներ կան, քանի որ փաստացի «Վանքի» տարածքում գործել է նաեւ յուրահատուկ պանթեոն:



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հին հունական առասպելական հերոս: 5.Հայերենի հոլով: 10.Համադասական շաղկապ: 11.Բանջարանոցային բույս: 13.Պետություն Աֆրիկայում ... Լեոնե: 14.Լատվիայի տարադրամը: 15.Վառ կարմիր: 16.Գինու աման: 17.... կոլա: 19.Ե՛վ տղամարդ, ե՛ւ քարայր: 20.Հեղուկի ավելցուկային կուտակում օրգանիզմում: 21.Թբիլիսահայ գրող Թորգոմյան (անունը): 25.Եղջերուների ընտանիքի երկկճղակավոր կաթնասուն կենդանի: 26.Անապատային քամի: 30.Հայկական ամսանուն: 31.«Բացվեց ...ը արեւելքում շողալով» (Ա.Պուշկին): 33.Թռչունի տեսակ: 35.Գետ Վրաստանում: 37.«Այստեղ»-ը գրաբարյան ձեւում: 38.Վերջ, վախճան: 39.Պետություն Եվրոպայում: 40.... եւ իր: 41.«... Մարիա» (երգ): 42.Եզակի, լոկ: 44.Ամպի գոռոցը: 46.Մեղվի ստեղծածը: 47.Իսպանիայում բնակվող ազգ: 48.Ձեռքով գրված: 50.Գործվածքի տեսակ: 52.Կղզի Միջերկրական ծովում:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Ոչ անձրեւային: 3.Ռուս մեծ գրող: 4.Վաթսուն վայրկյան: 5.Թերակղզի Աֆրիկայում: 6.Գեղասահքի խորհրդային նախկին չեմպիոնուհի: 7.Թանկագին քարերի կշռաչափ: 8.Հայ սրբադասված բանաստեղծ: 9.«..., կայծակ, հուր, երկաթ, Թող դավ դնե թշնամին» (Մ.Նալբանդյան): 12.Հացաբույսի խուրձ: 17.Րաֆֆու վեպերից: 18.Է.Շեւարդնաձեի նստավայրը Թբիլիսիում: 22.Օժանդակ բայ: 23.Հովհ.Թումանյանի հեքիաթի հերոսուհի: 24.Նար-Դոսի օպերային երգիչ որդու անունը: 27.Գրքերի հրատարակչություն Թբիլիսիում: 28.Քաղաք եւ շրջան Արցախում: 29.Վրաց մեծ գրող: 32.13-14-րդ դարերի Հայաստանի հայտնի համալսարանը գտնվում է այդտեղ: 34.«... մութն ընկել ա» (ժող. երգ): 36.Ոտաբաց, բոբիկ: 37.Պետություն, որի մայրաքաղաքը Լուանդան է: 42.Միավորված ազգերի կազմակերպություն՝ հապավված: 43.Տարի, ամյակ: 45.Քիմիական ...եր: 48.Հայոց այբուբենի տառ: 49.Երկրորդ ձայնանիշը: 50.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 51.Անձնական դերանուն:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Մախաթ: 8.Զմուռս: 10.Վարդ: 11.Կալ: 13.Կապան: 14.Ամանոր: 16.Մկան: 17.Ֆես: 19.Դաբաղ: 21.Ռենո: 22.Ղեկ: 23.Քթոց: 27.Աներ: 29.Գալետ: 32.Վար: 33.Փոս: 35.Դարու: 36.Եհովա: 37.Գրադ: 39.Ինչ: 42.Արքա: 44.Հավասի: 46.Զանգ: 49.Գայ: 50.Մահու: 53.Լարի: 54.Գեշ: 55.Շաղ: 56.Մարո: 57.Սուլ: 58.Գոնե: 59.Իղձ: 60.Նիմ: 61.Տաղ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ղարաբաղ: 2.Խթան: 3.Ազդակ: 4.Գուսան: 5.Ասկոֆեն: 7.Ավանակ: 9.Իլ: 12.Արեն: 15.Մամոնա: 18.Սոխ: 20.Բելլա: 24.Թավադ: 25.Ցերեկ: 26.Կտուր: 28.Կով: 30.Աղեն: 31.Երգ: 33.Փոքր: 34.Սառա: 38.Ավազ: 40.Չինարի: 41.Հայելի: 42.Ահմ: 43.Քահանա: 45.Վագոն: 47.Ալա: 48.Գրող: 51.Աշոտ: 52.Ուղեղ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445